Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36>> ծածկագրով Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.11.2019թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Մաթևոսյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Լ. Պալյան
	Ա. Հակոբյան
	Ն. Մարտիրոսյան
	Ն. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ս. Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 15.11.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (19.11.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 25.11.2019թ. նիստի ընթացքում պարզվել է, որ աշխատանքային ռեսուրսների մասով ներկայացված փաստաթղթերում բացակայում են.

- առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու մասին,

- Կարեն Առաքելյանի, Հաբեթ Յուզբաշյանի և Սերոբ Գյուլխանջյանի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

- Սերոբ Գյուլխանջյանի անձնագիրը:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 25.11.2019թ. ծանուցվել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (25.11.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2.1 ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս. Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ս. Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Մաթևոսյան

Անդամներ՝ ---------- Լ. Պալյան

---------- Ա. Հակոբյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան